ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

«ՍԵՎԱՆ-ՀՐԱԶԴԱՆՅԱՆ- ՋՐԱՌ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ГОСУДАРСТВЕННЫЙ КОМИТЕТ
ВОДНОГО ХОЗЯЙСТВА МИНИСТЕРСТВА
ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
"СЕВАН-РАЗДАНСКИЙ-ДЖРАР"

0047 ք. Երևան, Ա. Արմենակյան 125
հեռ. 65-15-06
Էլ. Փոստ. SEVAN_HR@mail.ru
24.02.14թ. N: 64

**ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3 ծածկագրով**
**շրջանակային համաձայնագիր**
**կնքած բոլոր Մասնակիցներին**

«ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՀԾՁԲ-11/3-ՍՀՋ-6» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի «Սևան-Հրազդանյան-Ջրառ» ՓԲԸ կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու Գնումների աջակցման կենտրոնի և «________________________» -ի միջև _____-թ. կնքված ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3-«___» շրջանակային համաձայնագրով նախատեսված տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայություններ: Ծառայությունների մատուցման պայմանները տրված են կից ներկայացված պայմանագրի նախագծում:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտը (բնօրինակ և 2 օրինակ պատճեն) անհրաժեշտ է ներկայացնել ք. Երևան, Ա. Արմենակյան 125 հասցեով, 7-րդ հարկ N:706 սենյակ, Կ. Բարսեղյանին (հեռ.65-15-11(16)), մինչև 2014թ. մարտի 6-ի, ժամը $12^{00}$:

Հայտերը կբացվեն ՀՀ տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի «Սևան-Հրազդանյան-Ջրառ» ՓԲԸ վարչական շենքում, ք. Երևան, Ա. Արմենակյան 125 հասցեով, 7-րդ հարկի N: 703 սենյակում, 2014թ. մարտի 6-ին, ժամը $12^{00}$-ին:

Հայտը ներառում է գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը: Հայտն անհրաժեշտ է ներկայացնել ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3 ընթացակարգի հրավերով սահմանված կարգով: Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

«ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՀԾՁԲ-11/3-ՍՀՋ-6» ծածկագրով գնումը կատարվում է շրջանակային համաձայնագրերի միջոցով և նամակը (հրավերը), էլեկտրոնային եղանակով, միաժամանակյա ծանուցմամբ ուղարկվում է օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի «ա» ենթակետի համաձայն հրապարակված շրջանակային համաձայնագրեր կնքած բոլոր մասնակիցներին:

Խնդրում եմ հրավերը ստանալուց հետո հետ հաստատել:

Առդիր՝ 22 թերթ:

Տնօրենի պաշտոնակատար Ս. Հովհաննիսյան

**Հավելված 1**

**<<ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3>> ծածկագրով**

**ընթացակարգի հրավերի**

**«ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՀԾՁԲ-11/3-ՍՀՋ-6» ծածկագրով**

ը ն թ ա ց ա կ ա ր գ ի գ ն ա հ ա տ ո ղ հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ի ն

**Դ Ի Մ ՈՒ Մ**

**Գ Ն Մ Ա Ն   Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ Ի Ն   Մ Ա Ս Ն Ա Կ Ց Ե Լ ՈՒ**

________________________________________________հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

<<Պատվիրատուի անվանումը>>-ի կողմից << **ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3**>> ծածկագրով հայտարարված ընթացակարգի ………………………………… չափաբաժնին (չափաբաժիններին) և հրավերի

չափաբաժնի (չափաբաժինների) համարը

պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

________________________________________-ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի կողմից

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

___________________________ -ի էլեկտրոնայանին փոստի հասցեն է՝ <<Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե>>:

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

__________________________________________________ ______________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

_____________________20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

**Հավելված 2**

**<<ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3>> ծածկագրով**

**ընթացակարգի հրավերի**

**«ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՀԾՁԲ-11/3-ՍՀՋ-6» ծածկագրով**

ը ն թ ա ց ա կ ա ր գ ի գ ն ա հ ա տ ո ղ հ ա ն ձ ն ա ժ ո ղ ո վ ի ն

# Գ Ն Ի  Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված <<---ՇՀԾՁԲ---/--->> ծածկագրով ընթացակարգի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը,

______________________________________________-ն առաջարկում է պայմանագիրը կատարել

Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

հետևյալ գներով.

**(ՀՀ դրամ)**

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Արժեք* | ԱԱՀ** | Առաջարկված գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| *1* | *2* | *3* | *4* | *5=3+4* |
| 1 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N1>> | | | |
| 2 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N2>> | | | |
| 3 | <<Գնման առարկայի չափաբաժնի անվանում N3>> | | | |
| … | … | | | |
| … | … | | | |

***3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:***

****Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փկյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:***

______________________________________________ ______________

Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ. Տ.

____________________20 թ.

(ամսաթիվը, ամիսը)

**Հավելված 3**

**<<ԳԱԿ-ՇՀԾՁԲ-11/3>> ծածկագրով**

**ընթացակարգի հրավերի**

# ՏՈւԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈւԹՅՈւՆ N <<ՇՀԾՁԲ---/--- >>

ք. Երևան <<______>>______________20 թ.

<<Մասնակցի անվանումը>>, ի դեմս Ընկերության տնօրեն՝ <<Ընկերության տնօրենի անուն ազգանունը>>, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի համաձայնությունը.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությունը մասնակցում է <<Պատվիրատուի անվանումը>> (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ <<Գնման առարկայի անվանումը>> ձեռքբերման <<---ՇՀԾՁԲ---/--- >> ծածկագրով բաց ընթացակարգին, պետք է ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում: Սույն ընթացակարգի արդյունքում կնքվելիք գնման պայմանագիրը Ընկերության կողմից ժամանակին և ամբողջ ծավալով կատարումն ապահովելու նպատակով Ընկերությունը սահմանում է իր հետևյալ պատասխանատվությունը.

1.1.1 Պատվիրատուի կողմից կազմակերպված <<Գնման առարկայի անվանումը>> ձեռքբերման N ՇՀԾՁԲ----/--- գնման պայմանագիրը ժամանակին չկատարելու, կատարումից խուսափելու կամ հրաժարվելու դեպքում

Ընկերությունը Պատվիրատուին վճարում է տուժանք՝ ------------------թվերով------------------ (---------------------------- տառերով----------------------------) ՀՀ դրամի չափով:

1.1.2 Պատվիրատուն իրավունք ունի Ընկերության կողմից սույն համաձայնության 1.1.1 կետում նշված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում նշված գումարի գանձման պահանջ ներկայացնել Ընկերությանը, որը Ընկերությունը անվերապահորեն կկատարի նման պահանջ ստանալու օրվանից 5 բանկային օրվա ընթացքում:

1.1.3 Ընկերությունն իրավունք է վերապահում Պատվիրատուն, առանց նախնական պահանջ ներկայացնելու, անվիճելի և անառարկելի կարգով գանձել համապատասխան գումար, սույն համաձայնության 1.1.1 կետում նշված գումարի սահմաններում, Ընկերությանը սպասարկող <<Մասնակցի բանկի անվանումը>> կամ Ընկերությանը սպասարկող ցանկացած այլ բանկում բացված՝ Ընկերության ցանկացած հաշվից: Սույնով <<Մասնակցի անվանումը>>, հանձնարարում է <<Մասնակցի բանկի անվանումը>>-ին, ինչպես նաև իրեն սպասարկող բոլոր բանկերին, սույն համաձայնության գործողության ամբողջ ժամկետի ընթացքում <<Պատվիրատուի անվանումը>> առաջին իսկ պահանջով և հետագա բոլոր պահանջներով տուժանքի մասին սույն համաձայնության հիման վրա Ընկերության բանկային հաշիվներից անակցեպտ (անվիճելի) կարգով գանձել պահանջվող գումարը:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Տուժանքի սույն համաձայնությունն ուժի մեջ է մտնում Ընկերության կողմից ստորագրման և կնքման պահից և գործում է մինչև 20 թ._________________-ի -ը ներառյալ:

2.2 Սույն համաձայնությունը չի կարող վաղաժամկետ դադարել, Ընկերության կողմից հետ կանչվել, փոփոխվել կամ այլ կերպ դադարել առանց Պատվիրատուի գրավոր համաձայնության:

2.3 Սույն Համաձայնության կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները

<<Մասնակցի անվանումը>>

<<Մասնակցի հասցեն>>

<<Մասնակցի բանկի անվանումը>>

Հ/Հ

ՀՎՀՀ

տնօրեն՝ --------------------------------

(ստորագրություն)

գլխ. հաշվապահ՝ ----------------------------

(ստորագրություն)

Կ.Տ

**Հավելված 4**

**<<ԳԱԿ-ԾՀԾՁԲ-11/3>> ծածկագրով**

**ընթացակարգի հրավերի**

# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N << ՀՀՏԿՆՋՏՊԿ-ԾՀԾՁԲ-11/3-ՍՀՋ-6>>

ք. Երևան <<___>> __________ 20 թ.

«Սևան-Հրազդանյան-Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն), ի դեմս տնօրենի պաշտոնակատար Ս. Հովհաննիսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և ------------------ն, ի դեմս Ընկերության տնօրեն ------------------------ի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N: 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N: 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N: 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N: 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Սույն պայմանագրի N: 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ:

Կատարողը Ծառայության մատուցման ավարտից երկու աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է հանձնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N: 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տանօրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

**4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է ______ (____տառերով________________________________________ ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N: 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 20 թ. դեկտեմբերի 25-ը:

**5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N: 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.7 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N: 1, N: 2 և N:3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.9 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| **ՊԱՏՎԻՐԱՏՈՒ** | **ԿԱՏԱՐՈՂ** |
|---|---|
| «Սևան-Հրազդանյան-Ջրառ» ՓԲԸ | |
| ՀՀ ք. Երևան, Ա. Արմենակյան 125<br>«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ «Մոսկվա« մ/ճ<br>h/h 16062001082900, ՀՎՀՀ 00093621 | ------------------------------------------<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. |
| Տնօրենի պաշտոնակատար | |
| ____________________ Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ<br>Կ. Տ. | |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
« » « » 2014 թ. կնքված
N: **ՀՀՏԿՆՋՏՊԿ-ՇՀԾՁԲ-11/3-ՍՀՁ-6**
ծածկագրով գնման պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Ձեռքբերվող Ծառայության նկարագիր | | | | |
|---|---|---|---|---|
| Չափա-բաժնի N: | Ծառայությունների անվանումը | Չափման միավորը | Քանակը | Միավորի գինը |
| 1 | **ԳԱԶ-3102, ԳԱԶ-3110 մակնիշի յուրաքանչյուր միավոր տրանսպորտային միջոցի համար** | | | |
| | 1.1 Բռնկման համակարգի ստուգում | դրամ | 1 | |
| | 1.2 Հովացման համակարգի ստուգում | դրամ | 1 | |
| | 1.3 Յուղման համակարգի ստուգում | դրամ | 1 | |
| | 1.4 Արտածման համակարգի ստուգում | դրամ | 1 | |
| | 1.5 Կցորդման համակարգի ստուգում | դրամ | 1 | |
| | 1.6 ՓՏ-ի աշխատանքի ստուգում | դրամ | 1 | |
| | 1.7 Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում | դրամ | 1 | |
| | 1.8 Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում | դրամ | 1 | |
| | 1.9 Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում | դրամ | 1 | |
| | 1.10 Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում | դրամ | 1 | |
| | 1.11 Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | դրամ | 1 | |
| | 1.12 Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | դրամ | 1 | |
| | 1.13 Շարժիչի կապիտալ վերանորոգում | դրամ | 1 | |
| | 1.14 Շարժիչի բարձիկի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.15 Շարժիչի բլոկի գլխիկի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.16 Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.17 Շարժիչի գլխիկի վերանորոգում | դրամ | 1 | |
| | 1.18 Բաշխիչ լիսեռի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.19 Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.20 Ատամնավոր փոկի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.21 Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.22 Ծնկաձև լիսեռի ներդիրների փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.23 Շարժաթևի ներդիրների փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.24 Ծնկաձև լիսեռի հետևի խցուկի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.25 Մխոցի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.26 Մխոցային օղակների փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.27 Թափանիվի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.28 Յուղի փոխում և յուղի զտիչի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.29 Յուղի պոմպի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.30 Բռնկման կարգավորում | դրամ | 1 | |
| | 1.31 CO կարգավորում | դրամ | 1 | |
| | 1.32 Կարբյուրատորի մաքրում | դրամ | 1 | |
| | 1.33 Կարբյուրատորի վերանորոգում | դրամ | 1 | |
| | 1.34 Օդի զտիչի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.35 Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.36 Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում | դրամ | 1 | |
| | 1.37 Բենզամղիչի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.38 Վառելիքի զտիչի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.39 Տրամբլյորի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.40 Տրամբլյորի վերանորոգում | դրամ | 1 | |
| | 1.41 Հովհարի փոկի փոխարինում | դրամ | 1 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 1.42 Հովիարի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.43 Ռադիատորի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.44 Ռադիատորի վերանորոգում | դրամ | 1 | |
| | 1.45 Թերմոստատի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.46 Ջրի պոմպի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.47 Ընդարձակող բաքի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.48 Խլարարի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.49 Կցորդման գլանի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.50 Կցորդման գլանի վերանորոգում | դրամ | 1 | |
| | 1.51 Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.52 ՓՏ-ի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.53 ՓՏ-ի կապիտալ վերանորոգում | դրամ | 1 | |
| | 1.54 ՓՏ-ի մասնակի վերանորոգում | դրամ | 1 | |
| | 1.55 Կարդանային լիսեռի խաչուկի վերանորոգում | դրամ | 1 | |
| | 1.56 Կարդանային լիսեռի միջնկյալ կախոցի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.57 Առջևի կամրջակի լիակատար վերանորոգում | դրամ | 1 | |
| | 1.58 Առջևի կամրջակի մասնակի վերանորոգում | դրամ | 1 | |
| | 1.59 Հետևի կամրջակի լիակատար վերանորոգում | դրամ | 1 | |
| | 1.60 Հետևի կամրջակի մասնակի վերանորոգում | դրամ | 1 | |
| | 1.61 Հետևի կամրջակի կիսասռնու փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.62 Կիսասռնու առանցքակալի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.63 Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում | դրամ | 1 | |
| | 1.64 Տրավերսի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.65 Անվակունդի առանցքակալի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.66 Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.67 Առջևի ցնցամեղմիչի վերանորոգում | դրամ | 1 | |
| | 1.68 Առջևի ցնցամեղմիչի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.69 Զսպակի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.70 Առջևի աջ կամ ձախ ձգանների փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.71 Միջին ձգանի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.72 Առջևի կայունարարի վռանների փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.73 Հետևի ցնցամեղմիչի վերանորոգում | դրամ | 1 | |
| | 1.74 Հետևի ցնցամեղմիչի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.75 Զոդման աշխատանքներ | դրամ | 1 | |
| | 1.76 Ղեկային կալունի վերանորոգում | դրամ | 1 | |
| | 1.77 ՂԿ-ի առանցքակալի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.78 ՂԿ-ի հոդակապերի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.79 Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգում | դրամ | 1 | |
| | 1.80 Հիդրոուժեղարարի փոկի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.81 Հիդրոուժեղարարի փողրակի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.82 Արգելակման գլխ. գլանի վերանորոգում | դրամ | 1 | |
| | 1.83 Արգելակման բանվ. գլանի փոխրինում | դրամ | 1 | |
| | 1.84 Վակուումային ուժեղարարի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.85 Առջևի սուպպորտի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.86 Արգելակային փողրակի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.87 Առջևի արգելակային կոճղակների փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.88 Հետևի արգելակային կոճղակների փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.89 Առջևի արգելակային սկավառակի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.90 Ձեռքի արգելակի ճոպանի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.91 Ձեռքի արգելակի մեխանիզմի կարգավորում | դրամ | 1 | |
| | 1.92 Էլեկտրասարքավորման վերանորոգում | դրամ | 1 | |
| | 1.93 Չափիչ սարքերի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.94 Գեներատորի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.95 Գեներատորի վերանորոգում | դրամ | 1 | |
| | 1.96 Մեկնարկիչի փոխարինում | դրամ | 1 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 1.97 Մեկնարկիչի վերանորոգում | դրամ | 1 | |
| | 1.98 Բռնկման կոդպեքի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.99 Վազքաչափի ճոպանի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.100 Սարքերի պանելի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.101 Անիվի փոխարինում | դրամ | 1 | |
| | 1.102 Անվադողի վերանորոգում | դրամ | 1 | |
| | 1.103 Անիվի բալանսավորում | դրամ | 1 | |
| | 1.104 Անիվների բացվածքի կարգավորում | դրամ | 1 | |
| | 1.105 Թափքի նորոգման և ներկման մասնակի աշխատանքներ | դրամ | 1 | |
| | 1.106 Թափքի նորոգման և ներկման կապիտալ աշխատանքներ | դրամ | 1 | |
| 2 | **Նիսսան Պատրոլ մակնիշի (IN1TESY61Z0536086) տրանսպորտային միջոցի համար** | | | |
| | 2.1 Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում | դրամ | 1 | |
| | 2.2 Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում | դրամ | 1 | |
| | 2.3 Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում | դրամ | 1 | |
| | 2.4 Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | դրամ | 1 | |
| | 2.5 Շարժիչի կապիտալ վերանորոգում | դրամ | 1 | |
| | 2.6 Վառելիքի պոմպի փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.7 Ֆորսունկաների փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.8 Վառելիքի զտիչի փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.9 Թերմոստատի փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.10 Ջրի պոմպի փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.11 Յուղի փոխում և յուղի զտիչի փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.12 Կցորդման բանվ. գլանի փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.13 Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.14 Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.15 Ցնցամեղմիչի թասակի փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.16 Առջևի կայունարարի փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.17 ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.18 Էլեկտրասարքավորման վերանորոգում | դրամ | 1 | |
| | 2.19 Չափիչ սարքերի փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.20 Գեներատորի փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.21 Մեկնարկիչի փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.22 Հովհարի փոկի փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.23 Փոխանցման տուփի փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.24 ABS-ի փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.25 ABS-ի վերանորոգում | դրամ | 1 | |
| | 2.26 Առջևի արգելակման սկավառակի փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.27 Հետևի արգելակման սկավառակի փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.28 Առջևի արգելակման կոճղակների փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.29 Հետևի արգելակման կոճղակների փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.30 Կոնդիցիոների լիցքավորում | դրամ | 1 | |
| | 2.31 Կոնդիցիոների վերանորոգում | դրամ | 1 | |
| | 2.32 Անիվի փոխարինում | դրամ | 1 | |
| | 2.33 Անվադողի վերանորոգում | դրամ | 1 | |
| | 2.34 Անիվի բալանսավորում | դրամ | 1 | |
| | 2.35 Անիվների բացվածքի կարգավորում | դրամ | 1 | |
| | 2.36 Թափքի նորոգման և ներկման մասնակի աշխատանքներ | դրամ | 1 | |
| | 2.37 Թափքի նորոգման և ներկման կապիտալ աշխատանքներ | դրամ | 1 | |
| 3 | **ՎԱԶ-21213/14 մակնիշի յուրաքանչյուր միավոր տրանսպորտային միջոցի համար** | | | |
| | 3.1 Բռնկման համակարգի ստուգում | դրամ | 1 | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 3.2  Հովացման համակարգի ստուգում | դրամ | 1 | |
| | 3.3 Յուղման համակարգի ստուգում | դրամ | 1 | |
| | 3.4 Արտածման համակարգի ստուգում | դրամ | 1 | |
| | 3.5 Կցորդման համակարգի ստուգում | դրամ | 1 | |
| | 3.6 ՓՏ-ի աշխատանքի ստուգում | դրամ | 1 | |
| | 3.7 Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում | դրամ | 1 | |
| | 3.8 Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում | դրամ | 1 | |
| | 3.9 Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում | դրամ | 1 | |
| | 3.10 Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում | դրամ | 1 | |
| | 3.11 էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում | դրամ | 1 | |
| | 3.12 Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում | դրամ | 1 | |
| | 3.13 Շարժիչի կապիտալ վերանորոգում | դրամ | 1 | |
| | 3.14 Շարժիչի բարձիկի փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.15 Շարժիչի բլոկի գլխիկի փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.16 Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.17 Շարժիչի գլխիկի  վերանորոգում | դրամ | 1 | |
| | 3.18 Բաշխիչ լիսեռի փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.19 Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.20 Ատամնավոր փոկի փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.21 Ծնկաձև լիսեռի առջևի խցուկի փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.22 Ծնկաձև լիսեռի ներդիրների փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.23 Շարժաթևի ներդիրների փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.24 Ծնկաձև լիսեռի հետևի  խցուկի փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.25 Մխոցի փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.26 Մխոցային օղակների փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.27 Թափանիվի փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.28 Յուղի փոխում   և յուղի զտիչի փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.29 Յուղի պոմպի փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.30 Բռնկման կարգավորում | դրամ | 1 | |
| | 3.31 CO կարգավորում | դրամ | 1 | |
| | 3.32 Կարբյուրատորի մաքրում | դրամ | 1 | |
| | 3.33 Կարբյուրատորի վերանորոգում | դրամ | 1 | |
| | 3.34 Օդի զտիչի փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.35 Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.36 Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում | դրամ | 1 | |
| | 3.37 Բենզամղիչի փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.38 Վառելիքի զտիչի փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.39 Տրամլյորի փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.40 Տրամլյորի վերանորոգում | դրամ | 1 | |
| | 3.41 Հովհարի փոկի փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.42 Հովհարի  փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.43 Ռադիատորի  փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.44 Թերմոստատի փոխարինում | դրամ | 1 | |
| | 3.45 Ջրի պոմպի փոխարինում | դրամ | 1 | |
